# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 38

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

***ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ***
***ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ***
***ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ***
***ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ***

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը**

2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:
*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
3. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. N 75-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները <<ՄՏՍ Հայաստան>> ՓԲԸ-ին վարձակալության տրամադրելու մասին:
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*
5. Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հր. 7/11 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին:
*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*
6. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*
7. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*
8. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր ուղղակի վաճառքով օտարելու մասին:
*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

11. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

12. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

13. Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

14. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները հիմնականում տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

* Լ Ս Ե Ց Ի Ն – 3* - *<<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. N 75-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 75-Ա որոշման մեջ՝ հավելված 1-ինը ընդունել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության արդյունքում հաստիքացուցակի մեջ ներառվելու է <<Խորհրդական-տնտեսական զարգացման պատասխանատու>>-ի հաստիքը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

* Լ Ս Ե Ց Ի Ն – 4* - *Համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները <<ՄՏՍ Հայաստան>> ՓԲԸ-ին վարձակալության տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող հենասյուները ամսական 500-ական ՀՀ դրամով, երկու տարի ժամկետով <<ՄՏՍ Հայաստան>> ՓԲԸ-ին վարձակալության տրամադրելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

* Լ Ս Ե Ց Ի Ն – 5* - *Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հր. 7/11 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հր. 7/11 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 6</u> - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0673-0007 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողատարածքից 0.0496հա հողատարածքը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 7</u> - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ նախագծով ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողատարածքների նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 8</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց նախագծով նշված հողամասերը ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով օտարելուն համաձայնություն տալուն:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Վ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 9* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 10* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Տ. Մեծի և Պ. Պռոշյանի փողոցներում գտնվող բնակելի կառուցապատման հողամասերը կառուցապատման իրավունքով՝ առանց մրցույթի տրամադրելուն:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 11* - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 12* - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն: Միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին՝ կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 13* - *Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 694-039 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասից 0.2685հա արոտավայրը համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն: Միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 14* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելուն և միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 15* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց նախագծով նշված գյուղատնտեսական նշանակության հողամասերն ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով օտարելուն համաձայնություն տալուն:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2020 թվականի սեպտեմբերի 22-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

| | |
|---|---|
| **ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ** | **ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ** |
| **ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ** | **ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ** |
| **ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ** | **ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** |
| **ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ** | **ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ** |
| **ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ** | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**